

**Ռոզա ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ
Կարինե ՇԱՀԲԱԶՅԱՆ**
Երևանի պետական համալսարան

**ԱԶԳԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ
ՀՈՒՑԱՄԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖՐԱՆՍԵՐԵՆՈՒՄ**

Սույն հոդվածը նվիրված է արյունակցական ազգակցություն արտահայտող գոյականների հուզական դրսևորումների վերլուծությանը: Կիրառվելով հաճախ ընդհանրական փոխհարաբերությունների ոլորտից դուրս՝ ազգակցության անվանահամակարգի գոյականները մատնանշում են սոցիալ-մշակութային, տնտեսական, քաղաքական, էթնիկական և այլ կապեր: Հոդվածի նպատակն է ցույց տալ, թե ինչպես են ազգակցություն արտահայտող գոյականները գործածվում որպես խոսակցի մեջ զգացմունքներ առաջացնելու մարտավարություն՝ լեզվական այլ միջոցների հետ համակցվելով:

Բանալի բառեր. ազգակցության անվանումներ, սոցիալական գործառույթ, խոսքային ակտ, հուզական դրսևորումներ, ցուցաբառեր (դեիկտիկ), խոսքային մարտավարություն

Ազգակցության անվանահամակարգի միավորները (գոյականները) միշտ չէ, որ կիրառվում են նույն ընտանիքի անդամների նկատմամբ: Այդ գործածությունը երբեմն դուրս է գալիս ընտանեկան փոխհարաբերությունների ոլորտից և տեղափոխվում այլ հարաբերությունների ոլորտ՝ մատնանշելով սոցիալ-մշակութային, տնտեսական, քաղաքական, էթնիկական և այլ կապեր: Ազգակցության այս բազմաթիվ ընկալումների գոյությամբ է բացատրվում ազգակցության գոյականների «հեղեղը» պաշտոնական և առօրյա երկխոսություններում, որոնց մեջ արդիական են համարվում երկու գլխավոր գործառույթ՝ ազգակցական կապերը և դրանց հուզարտահայտչական դրսևորումները՝ վատ կամ լավ արարքների արժևորումով:

Սույն հոդվածում մենք փորձում ենք կատարել արյունակցական ազգակցություն արտահայտող գոյականների հուզարտահայտչական դրսևորումների վերլուծություն և ցույց տալ, թե ինչպես են դրանք գործածվում որպես խոսակցի մեջ զգացմունքներ առաջացնելու մարտավարություն՝ լեզվական այլ միջոցների հետ համակցվելով:

Ազգակցական հարաբերություններ արտահայտող գոյականների տարատեսակ գործածությունները և դրանց հուզարտահայտչական դրսևորումները հաստատում են ոչ միայն խոսակցի հետ յուրահատուկ կապ հաստատելու մտադրությունը, այլ նաև ընդգծում են խոսողի կողմից մատնանշված ազգակցությունը այնպիսի մի շահեկան փաստար-

կի վերածելու նպատակը, որն ընդունակ է թուլացնելու կամ ուժեղացնելու խոսքային մյուս ակտերը:

Դիտարկվելով որպես բազմատեսակ ազգակցական հարաբերությունների արտահայտման միջոց՝ ազգակցության տերմինների կիրառությունն ընկալվում է որպես քաղաքավարական ակտ այնքանով, որքանով այն թույլ է տալիս ստեղծել և պահպանել սոցիալական կապեր և հետևել հասարակության մեջ գործող նորմերին: Միջանձնային պլանում ազգակցության անվանումների գործածությունն ընդունվում է որպես քաղաքավարական ակտ, որովհետև նրանք ծառայում են արժևորելու խոսողի և խոսակցի փոխհարաբերությունները /Kerbrat-Orecchioni, 1992: 168/: Մնացած դեպքերում «ազգակցության անվանումները ծառայում են որպես մեղմացուցիչներ, որոնցով խոսողը ցուցաբերում է զգուշավորություն այն ամենի նկատմամբ, ինչը վերաբերում է խոսակցի կյանքին, ինչպես նաև ձգտում է, որ իր անձնական տիրույթը (մարմնական, տարածական կամ ժամանակային) հասանելի չլինի խոսակցի համար առանց իր թույլտվության» /Kerbrat-Orecchioni, 1992: 167/: Լևինսոնը և Բրաունը կատարել են քաղաքավարական մարտավարության շատ հետաքրքիր դասակարգում, որտեղ դիմելաձևերը ներկայացված են որպես դրական քաղաքավարության մարտավարություններ /տե՛ս Kerbrat-Orecchioni, 1992: 167/: Մեր նպատակից դուրս համարելով լեզվական քաղաքավարության տեսության վերլուծությունը՝ նշենք միայն, որ ըստ բրաուն-լևինսոնյան դասակարգման՝ ազգակցության անվանահամակարգի միավորները պատկանում են վերը նշված դիմելաձևերի շարքին՝ արտահայտելով խոսակցի հանդեպ յուրատեսակ ուշադրություն: Այսինքն՝ ազգակցության անվանումները բազմաթիվ արժեքների կրողներն են (գրույցի ճիշտ կազմակերպում, միջանձնային հարաբերությունների ղեկավարում) և կիրառվում են իբրև լեզվական ակտի կարգավորողներ: Մեր կողմից ընտրված օրինակները վերցված են տարբեր բնագավառներին պատկանող երկխոսություններից, ինչպես օրինակ՝ խոսակցություններ ընտանիքում, խաղահրապարակում, հասարակական տրանսպորտում, դպրոցական, ակադեմիական միջավայրում, գեղարվեստական գրականության մեջ և այլն: Այդ օրինակները վկայում են ազգակցության անվանումների բազմարժեքության մասին: Գործածելով հատկապես ազգակցության տերմիններ՝ խոսակիցները ձգտում են մեղմացնել սպառնալից, վտանգավոր արարքները, կամ էլ փորձում են ընդգծել ցանկացած գնահատելի արարք:

Ազգակցության տերմինների բազմաթիվ ընկալումները և դրանց հուզարտահայտչական արժեքները և՛ ֆրանսերենում, և՛ հայերենում իրենց ազդեցությունն են թողնում դրանց ասելու ձևի, ինչպես նաև՝ ազգակցության անվանահամակարգի միավորներով ստեղծված քերականական կառույցների վրա: Օգտագործվելով որպես նախադասության տարբեր անդամներ և կոչականներ՝ այդ գոյականները ենթարկվում են ձևաբանական և իմաստաբանական տարբեր փոփոխությունների, ինչ-

պիսիք են բառերի միացումը, ածանցումը և իմաստի ընդլայնումը կամ նեղացումը: Առօրյա խոսքում ազգակցության անվանահամակարգի միավորների՝ որպես կոչական գործածության բազմաթիվ ձևերից կարելի է թվարկել.

1. գրավոր խոսքի ոճ՝ գրական լեզվի մակարդակ

ա) ֆրանսերենի ստանդարտ բառապաշարը ներկայացնող ազգակցության անվանումները՝ *fil*, *père* (*papa*), *mère* (*maman*), *cousin*, *frère*, *oncle* և այլն,

բ) ստացական դերանվանական ածական+ԱՏ (adj.possessif+TP)՝ *mon frère*, *mes frères*, *mon père*, *mon cousin*, *ma sœur*, *mon enfant* և այլն,

2. բանավոր խոսքի ոճ՝ խոսակցական մակարդակում՝ *tonton*, *fiston*, *tata*, *grand-pa*, *grandma* և այլն,

3. արգոյի ոճ՝ վերլան (*verlan*), խոսակցական մակարդակում՝ *sita* (անգլերեն *sister* բառից առաջացած), *répé* (*père*), *rémé* (*mère*), *réfré* (*frère*), *résé* (*soeur*) և այլն,

4. ազգակցության փոխառյալ անվանումներ՝ *byg-mamy* (*grand- mère*), *pater* (*père*), *mater* (*mère*) և այլն:

Ազգակցության անվանահամակարգի միավորները ստանում են որոշ հուզական-արտահայտչական արժեքներ հետևյալ դեպքերում՝

1. խնդրանքի խոսքային ակտում,
2. ներողություն խնդրելու խոսքային ակտում,
3. հանդիսավոր ողջունների և ելույթների ժամանակ,
4. ողջամտության կոչ անելիս,
5. ոչ կոչական գործածության դեպքում:

1. **խնդրանքը** գլխավորապես կամային ակտ է և մշտապես գտնվում է լեզվաբանների ուշադրության կենտրոնում: Լեզվական քաղաքավարության շրջանակներում խնդրանքի ուսումնասիրության նկատմամբ հետաքրքրությունը բխում է այն փաստից, որ այն համարվում է «ներխոսում» ուրիշի տարածք, ունեցություն վերջինիս գործելու ազատության նկատմամբ, այսինքն՝ ակտ, որով խոսողը դրդում է խոսակցին չմերժել իրեն: Ներդաշնակ շփման ձգտող խոսակիցների համար խնդրանքը ծառայում է հաղորդակցման ակտը մեղմացնելուն, մյուսի «դեմքը» պաշտպանելուն¹: Այդ նպատակով խոսակիցներն օգտագործում են տարբեր միջոցներ, ինչպիսիք են անուղղակի ձևակերպումները, բառային մեղմացուցիչները և այլն: Բառային մեղմացուցիչների ցանկին են պատկանում նաև ազգակցության անվանահամակարգի միավորները: Այսպիսով, խնդրանքը կարող է «մեղմացվել», երբ խոսողը այդ ընթացքում գործածում է ազգակցության որևէ տերմին՝ ցույց տալու համար խոսակցին, թե ինչպես է նրան ընդունում: Այլ կերպ ասած՝ որևէ ազգակցության տերմինի միջոցով խոսողը կառուցում է հստակ հարաբերության տիպ և ցույց է տալիս, որ խնդրանքը չի կարող դիտվել որպես հարկադրանք, այլ

ավելի շուտ որպես մի ակտ, որն արժեքավորում է և հաստատում է, օրինակ՝ եղբայրների միջև եղած հարաբերությունը: Երբեմն մերժումը դրա շնորհիվ դառնում է անհնար. լսողը ենթարկվում է այսպես կոչված բարոյական ճնշման, ինչպես հետևյալ օրինակում: Գործողություն կատարողը մի տարեց կին է, որը չի կարողանում օգտվել նոր սարքից և խնդրում է երիտասարդ ծառայողին օգնել իրեն.

- Ecoutez-moi, mon fils, j'aimerais que vous me veniez en aide. Je ne peux pas me servir de cet appareil.

Ուղեկցվելով քաղաքավարական այլ ցուցիչներով (vous անձնական դերանունը, պայմանական եղանակի գործածությունը)՝ *mon fils* ազգակցության գոյականն այստեղ օգտագործված է շահարկային նպատակով, որի հուզական ենթատեքստը երիտասարդի մեջ արթնացնում է որդիական զգացումներ: Ստացվում է, որ գործնական, պաշտոնական հարաբերությունը տեղափոխվում է «ընտանեկան դաշտ» և երիտասարդը պատկերացնում է իր մորը, որն օգնության կարիք ունի: Այսպիսով, անձանոթ երիտասարդի նկատմամբ *mon fils* բառի հիմնավորված գործածությունը դրական ազդեցություն է թողնում և տարեց կինը հեռանում է գոհ:

2. Ներողությունը խոսքային ակտ է, որն ունի սոցիալական գործառույթ: Ինչպես նշում է Գոֆմանը, ներողությունը խոսքում կատարում է «վերականգնող դեր»: Խոսողը միաժամանակ կատարում է թե՛ վիրավորելու, թե՛ ներողություն խնդրելու գործողություն: Ներողության խոսքային ակտով նա ձգտում է «փոխել վիրավորական համարվող որևէ գործողության նշանակությունը, այն դարձնել առավել ընդունելի» /Goffman, 1973: 113/: Կերբրատ-Օրեքիոնին նշում է, որ ներողություն խնդրելիս «վիրավորողը ցույց է տալիս վիրավորվածին, որ չնայած հասցրած վիրավորանքին (այս կամ այն պատճառով), անկախ ամեն ինչից ցանկանում է, որ խոսակցությունն ընթանա հարաբերականորեն ներդաշնակ ձևով» /Kerbrat-Orecchioni, 1992: 167/:

Ներողություն խնդրել խոսողի համար ինքնաբերաբար նշանակում է նվաստանալ, քանի որ վերջինս ստիպված է ընդունել և ափսոսալ, որ վիրավորել է խոսակցին: Մյուս կողմից, ներողությունն իրավիճակը շտկող ակտ է, որի նպատակն է վերաարժեքավորել վիրավորված խոսակցի տիրույթը և վերականգնել խաթարված հարաբերությունները: Ներողությունը ներկայանում է իբրև «խոսակիցների տիրույթների հավասարակշռության վերականգնման բարդ գործողություն»: Ազգակցության տերմինները նույնպես կարող են հաղես գալ որպես սպառնալիքի մեղմացուցիչներ և արժևորման (հարգանքի ընդգծման) միջոցներ: Ազգակցության տերմինների՝ իբրև վիրավորանքի մեղմացուցիչների գործածությանը հաճախ կարելի է հանդիպել ինչպես առօրյա կենցաղային խոսակցություններում, այնպես էլ գրական տեքստերում: Ահա մի օրինակ՝ վերցված առօրյա կյանքից: Խոսակցությունը տեղի է ունենում ուղևորի (Client: Cl.) և տաքսու վարորդի (Chauffeur: Ch) միջև.

Cl: Moi, **mon frère**, j'ai oublié de te dire que j'avais un billet de 500 euros.

Ch: **Vous les gens-ci** vous entrez d'abord, parce que tu savais qu'en me disant que tu n'avais pas la monnaie, j'allais te laisser...

Cl: Mon ami je t'en supplie ne dis pas ça, je suis quand même un vieux, tu penses que... je ne prends pas ton taxi sans payer.

Ուղևորը մեքենա նստելուց առաջ մոռացել է վարորդին ասել, որ ինքն ունի միայն 500 եվրո արժողությամբ թղթադրամ: Ընդունված կարգ է, որ հասարակական տրանսպորտ նստելուց առաջ ուղևորները նման դեպքերում նախօրոք պետք է տեղեկացնեն վարորդին, որ մանր գումար չունեն: Տաքսի նստելուց անմիջապես հետո նա տեղեկացնում է վարորդին և միաժամանակ ներողություն է խնդրում: Այստեղ հետաքրքիր է այն փաստը, որ խոսողն ընտրում է մի խոսքային (մակրո)մարտավարություն, որը բաղկացած է երկու միկրո-գործողություններից. 1. ներողություն խնդրելը՝ *ներիր ինձ*, որն ուղեկցվում է *եղբայր (եղբայրս)* բառով և 2. իր սխալի մեկնաբանումը՝ *ես մոռացա քեզ ասել, որ ունեմ միայն 500 եվրո արժողությամբ թղթադրամ*: Այս վերջին հատվածը նշանակում է, որ խոսողն ընդունում է իր մեղքը, ներողություն է խնդրում: *Mon frère* արտահայտությունն այստեղ ունի երկու շահարկային նպատակ: Մի կողմից այն ծառայում է հուզական եղանակով իրավիճակը շտկող խոսակցություն սկսելուն, որի նպատակն է ստեղծել ընկերական, բարեկամական մթնոլորտ, մյուս կողմից՝ փոքրագույնի հասցնել վիրավորանքի աստիճանը: Այդպիսով մենք ներկա ենք դիմելաձևի (կոչականի) «պրագմատիզացիայի», որը պարզ դիմելաձևից դառնում է այսպես ասած «զինաթափող» միջոց, որով հաճախորդը առաջինն է սկսում խոսակցությունը՝ փորձելով միաժամանակ մեղմացնել խոսակցի հնարավոր բացասական արձագանքը: *Mon frère* արտահայտությունը ծառայում է արժևորելու խոսակցի անձը, նրա նկատմամբ հարգանք ցուցաբերելով, ինչը դուրս է գալիս ծառայությունների պատկերացումների շրջանակից: Այլ կերպ ասած՝ վարորդ-ուղևոր հարաբերությունը վերածվում է առավել լայն և արժեքավոր սոցիալական հարաբերության՝ եղբայրության: Հարաբերությունների այսպիսի ընդգծումը, որն ավելի հուզական է, քան գործնական, նշանակում է սխալի ուղղում, կամ գոնե վիրավորանքի մեղմացում:

3. Ազգակցության գոյականների հուզաարտահայտչական գործածության մենք հանդիպում ենք նաև առօրյա և հանդիսավոր **ողջույնի խոսքերում**, երկրի ղեկավարի, թագավորի, հոգևոր հովվի, կամ պարզապես որևէ ձեռնարկության ղեկավարի ելույթներում, երբ վերջիններս դիմում են ժողովրդին և հանդես գալիս որևէ կոչով: Այստեղ ազգակցության տերմինների գործածությունն ունի երկու գործառույթ. նախ և առաջ այն թույլ է տալիս լսարանը դարձնել թիրախ, այնուհետև շփման մեջ մտնել նրա հետ: Ողջույնի խոսքերում և ելույթներում

գործածվում են հիմնականում ազգակցության այնպիսի անվանումներ, ինչպիսիք են *chers frères, mes enfants* և այլ հավաքական կոչականներ, որոնցով խոսողները ձգտում են ուշադրության գրավել՝ հիշատակելով լսարանի անդամների ընդհանուր ծագումը, և փորձում նրանց ներքաշել գործողության մեջ: Այլ կերպ ասած, դա լսարանի «կարծրատիպի» մարտավարություն է /Amossy, 2006: 45/:

Ահա ողջույնի մի խոսք.

- Fils de mes ancêtres, je vous salue !

Այստեղ թագավորը դիմում է իր ժողովրդին: *Fils de mes ancêtres* արտահայտությունը, որով սկսվում է նրա ճառը, կոլեկտիվ կոչական է, որը կիրառվում է այնպիսի լսարանի նկատմամբ, որտեղ կան և՛ կանայք, և՛ տղամարդիկ:

Ազգակցություն արտահայտող գոյականի գործածությամբ ստեղծված իրական կամ կեղծ ազգակցական հարաբերությունն անհրաժեշտ է, որպեսզի վնասագերծվի խոսակիցներից մեկի նկատմամբ սպառնալիք համարվող ցանկացած խոսակցական ակտ: Այդ գործածությամբ ազգակցության անվանումները ընդգծում են համագործակցության կոչ անող *écoute, écoutez-moi* արտահայտությունների հաղորդակցական գործառույթը:

4. **Ողջամտության կոչը** հաճախ նախորդվում է այնպիսի մասնիկներով, ինչպիսիք են *écoute, voyons, non* և այլն: Այն սովորաբար ծառայում է մեղմացնելու խոսակիցների միջև եղած տարաձայնությունները՝ կոչ անելով խոսակցին լինել ողջամիտ և ըմբռնումով մոտենալ իրավիճակին, խոսքի բովանդակությանը և խոսքային ակտին: Այն դիմելաձևերը, որոնք ուղեկցում են ողջամտության կոչին, ամենից առաջ ծառայում են մեղմացնելու խոսակցի «դեմքին» ուղղված սպառնալիքը: Ահա մի խոսակցություն, որը տեղի է ունենում միևնույն թագավորի երկու կանանց՝ երիտասարդ թագուհի Մարի-Լուիզ Մանգվայի և տարեց թագուհի Յաուի միջև (վերցված Դ.Նդաշի-Տանի «La reine captive» վեպից): Այս խոսակցության մեջ, Մանգվան, այլ թեմաների հետ, ի միջի այլոց, տեղեկացնում է իր ճնշվածության, տխրության, թագավորական պալատը լքելու և նույնիսկ մեռնելու ցանկության մասին: Նրա խոսակիցը փորձում է նրան հակառակը համոզել: Կարդանք օրինակը.

- *Mère, il y a mille pensées qui m'accablent depuis ce soir. Et puis... Tout me donne envie de disparaître, de me donner la mort ou bien de partir d'ici, par une nuit obscure.*

- *Non, ma fille. Sois sérieuse. Tu sais bien qu'à cause du serment de fidélité qui te lie au roi, tu ne dois connaître d'autre homme que lui. Il y a quelques années, une de nos coépouses mourait ici, parce qu'elle avait osé... Et tu parles de te donner la mort ! Tu sais bien que les cadavres de ceux qui se donnent la mort sont*

laissés aux corbeaux, maudits. Finalement, tu ne peux que supporter ... (Ndachi-Tagne, 1986, p. 89).

Այս տխուր խոսակցության շարունակության մեջ, որտեղ երիտասարդ թագուհին հայտարարում է, թե չգիտի այլևս որ սրբին նվիրվի, տարեց թագուհին ողջամտության կոչ է անում իր ամուսնու երիտասարդ կանանցից մեկին խոսքային բարդ մարտավարության միջոցով, որը բնորոշվում է հատկապես *ma fille* տերմինի առկայությամբ: Այդ տերմինը նախորդված է *non* մասնիկով, որի նպատակն է բացահայտորեն ընդգծել Յաուի անհամաձայնությունը, որն առավել բացահայտ է դառնում *sois sérieuse* արտահայտության մեջ: Ողջամտության այս կոչը առավել ընդգծվում է հաջորդ օրինակում, որը կարող է որակվել որպես դաստիարակչական: Թագուհի Յաուն հիշեցնում է սոցիալական տաբուները, որպեսզի ազդի երիտասարդ թագուհու զգացմունքների վրա և բացահայտի նախնիների ավանդույթների օտարման անհնարինությունը: Այդ նպատակով նա հիշատակում է նախնիների որոշ ավանդույթներ, որոնք Մանգվան (ինչպես նաև մնացած բոլոր թագուհիները) պարտավոր է հստակորեն հարգել և պահպանել՝ հավատարմություն, հնազանդություն, հակառակ դեպքում նա հիշեցնում է սպասվելիք վտանգները և այն դաժան վերաբերմունքը նրանց հանդեպ, ովքեր ինքնասպան են լինում: *Ma fille* արտահայտության միջոցով Յաու թագուհին շեշտը դնում է *mère - fille* հարաբերության վրա՝ մոռանալով իրենց մեջ գոյություն ունեցող այլ հարաբերության (այն է՝ միևնույն ամուսնու երկու կանայք) մասին: Երկխոսության մեջ առկա մայր-դուստր հարաբերությունը նպատակ ունի հաստատելու խոսողի հեղինակավոր դիրքը և զգացմունքային վերաբերմունքը երիտասարդ թագուհու նկատմամբ, դիրք, որի հիման վրա ողջամտության կոչը դառնում է հիմնավորված: *Ma fille* բառակապակցությունը, իբրև քնքշանքի ցուցիչ, Յաու թագուհուց ստեղծում է խորհրդատուի կերպար, որը ցանկանում է ոչ թե վախեցնել իր խոսակցին, այլ ստիպել նրան գիտակցել այն վտանգները, որոնք կբխեն երիտասարդ թագուհու ընդունած որոշումներից: Հետևյալ օրինակում ողջամտության կոչը իրականացվում է *tu es folle, ma fille* արտահայտության միջոցով: Ազգակցության գոյականը այստեղ խաղում է առաջնային, հիմնական դեր:

- *Tu veux alors dire que la femme doit demeurer toujours l'ordure qu'elle est dans ce village ? [...] Les temps doivent changer. Vous devez vous dire que celui qui veut traverser une rivière à gué ne doit pas avoir peur de se mouiller. Les temps changent.*

- *Tu es folle, ma fille. Qui a jamais eu l'audace de changer le cours d'une rivière ?* (Ndachi-Tagne, 1986, p. 127-128).

Տարեց թագուհու՝ ինչպես վերը նշված, այնպես էլ հետագա խորհուրդների նպատակը պարզ է՝ համոզել Մանգվային հրաժարվել իր հեղափոխական գաղափարներից: Այդ խոսքը իրականացվում է լեզվական բազմաթիվ միջոցների համակցմամբ, որոնց մեջ կան *ma chère fille* և *ma fille Mangwa* արտահայտությունները: Այս կոչականների միջոցով Յայու թագուհին իրականում կառուցում է հարաբերությունների երկու տիպ, որոնք ունակ են մեծացնել ողջամտության իր կոչի ազդեցության ուժը՝ հորիզոնական հարաբերություն (զգացմունք, հուզականություն և համերաշխություն) և ուղղահայաց հարաբերություն (կենտրոնացած այնպիսի տարրերի վրա, ինչպիսիք են տարիքի տարբերությունը, խելամտությունը և հեղինակությունը):

5. Ազգակցություն արտահայտող գոյականները պահպանում են իրենց հուզական հարանշանակությունը նաև **ոչ իբրև կոչական գործածվելու** դեպքում: Խոսակցական լեզվին բնորոշ ազգակցության որոշ անվանումներ, ինչպիսիք են *maman, papa, papi, pépé, mamie, mémé, tonton, tati* ունեն հուզական մեծ հարանշանակություն և տարբերվում են ընտանիքի նույն անդամներին մատնանշող գրական բառերից, ինչպիսիք են՝ *mère, père, grand-mère, grand-père, oncle, tante*: Այս երկու ոճերին պատկանող բառերը հավասարապես օգտագործվում են և՛ կոչական, և՛ ոչ կոչական գործառույթներով, որպես նախադասության տարբեր անդամներ՝ ենթակա, հատկացուցիչ, խնդիր և այլն: Օրինակ՝ *maman* բառը հուզականություն արտահայտող նշան է, որը ջերմության և մտերմության տպավորություն է թողնում: Հույզի ազդեցությունը իրականում գալիս է այդ բառի նշույթավորված բնույթից: *Maman* և *mère* բառերի ունեցած հուզական ազդեցության տարբերությունը երևում է հետևյալ օրինակներում՝

1. *Aujourd'hui, **maman** est morte.* (A. Camus, *L'Etranger*, p.7)

2. *Aujourd'hui, **ma mère** est morte.*

Առաջին նախադասության մեջ կա հուզական ենթատեքստ, որը չի զգացվում երկրորդում:

Ահա ևս մեկ օրինակ, որտեղ առկա են ընտանեկան հարաբերություններ արտահայտող երկու տեսակ գոյականներ (գրական և խոսակցական ոճի)։

... *Dans le petit salon gisaient les corps de nos deux **cousins** morts. Les militaires nous firent descendre et le cauchemar continua. Au bas de l'escalier se trouvait le corps d'un des gardes, le corps de **papa**, le sergent Badje. Plus loin le corps d'un **oncle** maternel, Moussa Kao, celui d'une **tante** de **maman** et d'autres... C'était vraiment une vision cauchemardesque et nous avons tous l'impression d'un cauchemar et que nous allions nous réveiller, mais hélas... /www. koinai. net / sur-le-vif/ niger-1974-ce-qui-n-a-pas-été-dit /*

Այստեղ մենք հանդիպում ենք և՛ խոսակցական ոճի, և՛ գրական ոճի ազգակցության տերմինների: Ի տարբերություն վերջինների (*cousins, oncle, tante*)՝ որպես կոչական հանդես եկող խոսակցական ոճի ազգակցության գոյականները (*papa, maman*) առանց որոշակիչների, ինքնաբերաբար մատնացույց են անում պատմողի ազգականներին, որը տեքստում հայտնվում է առաջին դեմքով: Եթե մենք փորձենք դրանք փոխարինել *mon père* և *ma mère* ձևերով, պատմությունը կընդունի առավել չեզոք երանգ, մինչդեռ *papa* և *maman* ձևերով ընթերցողն իրեն ավելի կապված է զգում տեքստին (ինչպես A. Camus-ից վերցված օրինակում, որտեղ մտերմության զգացողություն կա):

Ազգակցության անվանահամակարգի միավորների գործածությունը ոչ իբրև կոչական (ինչպես վերը նշված օրինակներում) ունի մի շարք լեզվաբանական առանձնահատկություններ: Ահա դրանցից երկուսը.

1. Ինչպես նկատում է Պերրետը /Perret 1970: 112-118/, ազգակցության անվանում-կոչականներն ունեն դեիկտիկ բնույթ, երբ նրանք օգտագործվում են առանց որոշակիչի, նրանք հղում են կատարում խոսողի ընտանիքի անդամներին: *Maman* բառը, որն անհրաժեշտաբար նշանակում է *ma mère*, հանդես է գալիս որպես դեիկտիկ: Հաջորդ օրինակում հանդիպում ենք *maman* բառի երկու տեսակ.

Tous les ans, c'est-à-dire le dernier et l'autre, Papa et Maman se disputent beaucoup pour savoir où aller en vacances, et Maman se met à pleurer et elle dit qu'elle va aller chez sa maman, et moi, je pleure aussi parce que j'aime bien Mémé, mais chez elle il n'y a pas de plage, et à la fin on va où veut Maman et ce n'est pas chez Mémé. (Jean-Jacques Sempé et René Goscinny, Les Vacances du petit Nicolas)

Maman բառը *sa maman* արտահայտության մեջ սովորական ազգակցության տերմին է, *mère* բառի հոմանիշը: Մինդեռ *maman* բառի մյուս երեք գործածությունները (մեծատառով, առանց որոշակիչի) բոլորն էլ մատնանշում են խոսողի մորը: Այլ կերպ ասած, այդ երեք *maman*-ները հանդես են գալիս որպես դեիկտիկ: Այդ առանձնահատկությունը նկատվում է նաև իբրև կոչական գործածվող ազգակցության տերմիններում:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ ազգակցության տերմինները միշտ չէ, որ հանդես են գալիս դեիկտիկների նման որպես «մաքուր» ցուցային բառեր՝ *je, ici, maintenant* բառերի նման. երբ նրանք օգտագործվում են որոշակիչի հետ, նրանք հանդես են գալիս որպես «սովորական» բառեր:

2. *Papa* և *maman* ասել չի նշանակում միայն դիմել ինչ-որ մեկին, այլև նրան ասել, թե ինչպիսին ես իրեն ընդունում: Այդ իմաստով, ինչպես նկատում է Պերրետը, դիմելու գործողությունը ներառում է ստորոգում, որն առկա է նույնիսկ ազգակցության տերմինների ոչ կոչական գոր-

ծածության մեջ: Ազգակցական բնույթի բառի օգնությամբ պատմողը բացահայտ կերպով ներկայացնում է իր ընտանեկան հարաբերությունը:

Որպես եզրակացություն նշենք, որ ազգակցության տերմինները ներկայացնում են տարբեր արժեքներ՝ ունակ փոխակերպվելու այնպիսի «գործիքների», որոնք ուղղված են հաղորդակցական լարվածությունը մեղմացնելուն կամ ընդգծելուն: Սույն հոդվածում մենք փորձեցինք ցույց տալ, որ ազգակցության տերմինների հուզական գործածությունն ի հայտ է գալիս հաղորդակցական առավել լայն շրջանակներում, որոնցում խոսակցական այլ մարտավարությունները թույլ են տալիս առավել ընդգծել գործածվող տերմինների հուզական բնույթը և դրանց օգնությամբ խոսակցի վրա ներգործելու հնարավորությունները:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. *Դեմք* հասկացությունը լեզվական քաղաքավարության տեսության մեջ առաջ է քաշվել է. Գոֆֆմանի կողմից 1973թ. *La présentation de soi* աշխատության մեջ: Մի փոքր ավելի ուշ՝ 1978թ., նույն հասկացությանն անդրադարձել են Բրատունը և Լևինսոնը, որոնք լեզվական քաղաքավարության տեսության շրջանակներում յուրաքանչյուր անհատի համար սահմանում են երկու դեմք՝ «դրական դեմք» (որը համապատասխանում է ինքնասիրահարվածությանը) և «բացասական դեմք» (յուրաքանչյուրի տարածքը) /տե՛ս Kerbrat-Orecchioni, 1992: 167/: Նշենք, որ ներխուժումը այդ տարածք կարող է դիտվել որպես ոտնձգություն: Այսպիսով՝ փոխգործակցության ընթացքում մասնակիցներն անում են ամեն բան, որպեսզի պաշտպանեն իրենց և խնայեն խոսակցի և՛ դրական, և՛ բացասական դեմքերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Amossy R. L'argumentation dans le discours. Paris: Armand Colin, 2006.
2. Goffman E. La presentation de soi (traduit de l'anglais). Paris: Les Editions de Minuit.1973.
3. Kerbrat-Orecchioni C. Pour une approche contrastive des formes nominales d'adresse // *French Language Studies*, N 20, 2010.
4. Kerbrat-Orecchioni C. Les Interactions verbales, vol. 2. Paris: Armand Colin, 1992.
5. Kerbrat-Orecchioni C. Les Interactions verbales, vol. 3. Paris: Armand Colin, 1998.
6. Mulo Farenkia B. Exploitations argumentatives des termes de parenté au Cameroun // *Philologie im Netz*, 53, 2010.

7. Perret D. Les appellatifs: analyse lexicale des actes de parole // *Langages*, N 17. 1970.
8. Camus A. L'Etranger. Paris: Gallimard, 1957.
9. Sempé J.J., Goscinny R. Les Vacances du petit Nicolas. Paris: Éditions Gallimard, 1994.
10. www. koinai. net / sur-le-vif / niger-1974-ce-qui-n-a-pas-été-dit / l'article / Moussa est blessé//

Ր. МЕЛИКСЕТЯН, К. ШАХБАЗЯН – Эмоциональные выражения компонентов системы терминов родства. – Данная статья посвящена анализу эмоциональных выражений терминов кровного родства. Отмечено, что система терминов родства не всегда применяется только для обозначения кровного родства и часто выходит за рамки родственных отношений, обозначая социально-культурные, экономические, политические, этнические и другие отношения. Цель статьи – показать, как термины родства в сочетании с другими лингвистическими средствами используются как стратегические способы пробуждения чувств в собеседнике.

Ключевые слова: термины родства, социальная функция, речевой акт, эмоциональные выражения, дейктические слова, речевая стратегия

R. MELIKSETYAN, K. SHAHBAZYAN – Emotional Expressions of the Components of Kinship Terminological System. – The present paper is devoted to the analysis of emotional expressions of blood kinship terms. The kinship terminology system is not always applied only to family members. Its application often goes beyond the scope of family relations thus denoting socio-cultural, economical, political, ethnic and other relations. The paper aims at showing how kinship terms are used as a strategy of evoking feelings in the interlocutor in combination with other linguistic means.

Key words: kinship terms, social function, speech act, emotional expressions, deictic words, speech strategy